

1913 № 2117.

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԾԱՀԿԵՐՊԵՐՆ

ԲՈՅԱ  
ИНСТИТУТА  
ПОСТОНОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

# ՀԱՇՏՈՒԹԻՒՆ


ԱՇԽԵՐՀԻ ՀԵՔԵԱԹԻՑ



Վայականութիւն

Եղիքտրաշարժ Տպարան Մ. Աթոռոյ

1913



19 NOV 2011

Сарн.  
6169


891.99

Г-18

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ

Института  
Востоковедения  
Академии Наук  
СССР

# ՀԱՅՏՈՒԹԻՒՆ



Վահագանակ  
Ելեքտրաշարժ Տպարան Մ. Աթոռոյ  
1913

13 JUL 2013

46918

## ՀԱՅՏՈՒԹԻՒՆ

Արևելքում, ուր արևը կարմիր է,  
մարդկանց սրտերը էլ աւելի կարմիր,  
ապրում էր մի երիտասարդ, արշալոյսից  
աւելի գեղեցիկ, երազից աւելի քննոյշ...  
Հագնում էր նա բեհեզ: Սև մազերը եղած  
էին ուսերին որպէս գիշեր, աչքերը  
հեքիաթային, որպէս արևելքի երգը:

Հարուստ էր նա ամենից աւելի...  
Եւ երբ խելահաս էր գարձել ու շօշափել  
իր մարմնը, զգացել էր, որ գեղեցիկ է,  
որպէս արևելքի վարդերը...

Զարթնում էր երիտասարդը, իջնում  
էր պարտէզ, ունկնդրում էր զմայլած  
սոխակի, արշալոյսի շողերի հետ համա-  
բուրւող, երգին ու կարօտում էր, անվերջ  
կարօտում... Լւացում էր վարդերի ցու-  
դով, հոտոտում էր քովով ծաղկիները ու



S7070 - 66

վերադառնում գղեակը ոսկեափայլ ու  
հոյակապ...

Ամեն անդամ պարտէզ իջնելիս,  
օձերը խոնարհ գալարւում էին նրա ոտք,  
ների առաջ, լիզում էին նրա անցած ճառ  
նապարհը... Եսիտասարդը նայում էր  
եմաստում օձերի աշբերին ու սիրում,  
աւելի էր սիրում աշխարհը, մարդուն: Ոչ  
ոք չկար նրա գղեակում: Նրա մայրը,  
է գնացել, ծնել է միայն երեն, իսկ հայրը  
գնացել է հեռաւոր ծովերի միւս ափերը  
ճշմարտութիւնը գտնելու:

Մայրը ոսկեթելով ասեղնագործած  
մի մետաքսեայ թաշկինակ էր թողել:  
Ասեղնագործած էր այդ թաշկինակի վեւ  
սայ: «Դերւիշն ասաց դաւակս, որ չե  
ծնւել դեռ, որոնի՞ր, բայց մի՛ սիրե»:

Մանկուց լսել էր Եսիտասարդը այս  
ըոլորը և այժմ ուզում էր հօր որոնած  
ճշմարտութիւնը ինքը ապրել:

Մատածում էր եր հօր որոնած ճշմարտ  
ութեան մասին: Թերթում էր գիշերով  
ասաղերի հոգին, զգում ու ապրում էր

նրա ըիւրեղ հոգին, որ վերը ոչինչ չկայ  
և ամեն, ամեն ինչ ցածումն է, երկը վերայց:

Մի օր շունդով բաց արեց երկաթէ  
պարսպների, երկաթէ գարպասները,  
դուրս եկաւ այցի աշխարհին:

Քայլում էր նւերական քատաքի  
վիզոցներով: ամեն կողմից վերաւոր ձեռա  
քեր էին պարզում գէպի նա... Կանգա  
նեց երկտասարդը, — շոյեց ճակատն ու  
մտածեց... Նոջեց ամբողջ քաղաքը, դը  
զեակը վերադարձաւ լուս ու մտածկոտ:

Բաժանեց իր հարստութեան մի մաս  
որ քաղաքի աղքաներին...

Գոհ էին այժմ բոլորը, այլևս աղքատ  
չկար, գոհ և ուրախ գղեակը վերա  
գարձաւ:

Կատարեց իր երեկոյեան այցը պար  
տէղին, կերաւ իւրաքանչիւր պառողից ու  
գոհ գղեակը բարձրացաւ մարմառէ սան  
դուխներով:

— Ոչ մի աղքատ չկայ, բոլորը երջա  
նկի են. մարդիկ կապրեն այժմ ապահով.  
Ճե լինի ոչ քեն, ոչ ատելութիւն, ոչ

սպանութիւն, ոչ շղթայ. այլևս արեան  
հոաը չի խառնւի ծաղկիների բուրմուն-  
քին... բոլորը դոհ են, բոլորը երջանիկ...  
Եւ ուրախութեան արցունքները դոհար  
առ դոհար ցողեցին նրա շուշանից նուրբ  
ու սպիտակ այտերը:

Առաւ քնարը, նոտեց դզեակի պա-  
տրշգամբում: Չորս կողմը արևելքի խօ-  
սուն թռչունները հաղարեանդ ձայնե-  
րով լցրին նրա որսնող հոգին, լուսինը  
թափեց իր լոյսը աշխարհի վերայ: Երե-  
տասարդը դարեկց քնարին ու երգեց  
զմայլանքով արևի երգը, երջանկութեան  
երգը:

— Երջանիկ են բոլորը, երջանիկ եմ  
և ես—մտածեց երետասարդը...

Լոեց. մտածեց նորից... Երջանիկ  
են բոլորը, երջանիկ եմ և ես...

Դուրս եկաւ, որ ծաղկիներին ու  
աստղեցին բարի գեշեր ասի ու քնանայ...

Զգում էր, որ չպիտի կարողանայ  
քնել. «բարի գեշերը թող մնայ», մտա-  
ծեց նա: Վերցրեց ոսկիապատ կեռ թու-  
ը, կիսալուսնի պէս շողշողուն, վերցրեց,

բայց միաքն ընկաւ յանկարծ, որ բոլորը  
երջանիկ են: Ցած զբեց և ուղեորւեց  
նւիրական քաղաքը զբօսնելու:

— Բոլորը երջանիկ են — մտածում  
էր նա...

Յանկարծ փողոցի մէջտեղից հրեցին  
նրան. զարմացած նայեց, տեսաւ կալա-  
նաւորի շղթաները: կանգնեց, մուայլւեց,  
որպէս աշնան երկինք...

Նրան ասացին, որ այդ կալանա-  
ւորը չի հաւատում այն աստուծուն,  
որին բոլորն են հաւատում...:

Մուայլ ու գեղեցիկ հոգով անցաւ  
բոլոր փողոցները... Լսում էր ուրախու-  
թեան քրթեցները, որ գուրս էին ծորում,  
ողողում կալանաւորի անցած ճանա-  
պարհը... Մուայլւեց ու երկար մտածեց  
կրկեն... «Ճանում են շղթայակապ նրան,  
ով չի հաւատացել այն աստուծուն, որին  
շատերն են հաւատում»...

Խորախորհուրդ շարժեց գլշերահեր  
գլուխը ու անցաւ: Լսում էր ինզու-  
թեան թմբուկի հարւածները: Մուայլւեց.  
«Միթէ ես չկարողացայ տալ վերջնական

ու մեակ երջանկութիւնը, մի՞թէ մայր հողք գեռ արիւնի ու արցունքի կարօտ ունի»...

— Ի՞նչպէս, մի՞թէ մէկի տխրութիւնը միւսինը չէ, իմը չէ... մի՞թէ սրանը չեն ապրում իրար հիւսւած. չէ մայր քնութիւնը մի է, մեզնից գուսը մի: Մի՞թէ մենք ապրում ենք մեզ համար, իւրաքանչ մւըը եւր համար, անհազորդ...

Կանգնած էր գղեակի տռաջ. բաց զուռը, ներս մտաւ մուայլ ու դաժան, որպէս զիւային երադ: Զնայեց այլես պարտէզին. չողջունեց ծագիկնեւ վին, որոնք ժպառում էին մանկական անմեղութեամբ աշխարհին...

Առանց երկինք նայելու վեր բարձրացաւ ու մտաւ իւր սենեակը:

Ամեն ինչ այնպէս հին ու խարուսիկ էր երևում, ինչպէս երբեմնի արտասանած «ըոլովը երջանիկ են» խօսքը:

— Մարդիկ ապրում են ուրեմն անշաղորդ: Ես կարծում էի աշխարհի իւրաքանչիւր շունչն անդամ, ծիլն անդամ

ապրում է ուրիշի հոգին, որպէս ուրիշինը:

— Այժմ ինձ թւում է, թէ պարտէզիս ծաղիկները անուշահոս վակել են իրենց թերթիկները ու տխուր են անբաւօրէն... չէ որ նորա տեսան իմ տխրութեամբ լեցուն աչքերը: «Բոլորը երջանիկ են, ես էլ նրանց հետ», որքան սուր կայ այս խօսքերի մէջ. ինչպիսի գեղեցիկ, հմայիչ ինքնախարէութիւն՝ «Ես էլ երջանիկ եմ»: Ամեն հոգի իր կեանքն ունի, անկախ ու հարազատ միայն և միայն իրեն, ինքն իրա համար. ուրիշը մինչև ես չեմ դառնում նա չկայ էլ ինձ համար, ուրեմն ես ինձ եմ ապրում: Ցիշում եմ անցեալ առաւոտ մի ծաղիկ պոկեցի, հոտուեցի, այնքան անուշահոս էր ու գեղեցիկ, չէ այն ժամանակ ես ինձ և աշխարհին երջանիկ էի համարում. իսկ իմ տխրութեան օյերին ծաղիկները մնացին թփին կպած, անհետաքըբեր...

Մոտայլւեց ու մտածեց երկանը ու երկանը, ալիք առ ալիք ովկիանոսի պէս փուռում էին նրա մտքերը: Նւիրական քա-

դաքի մինարեխ վրայից մոլլան ըարս ոռաւ-  
համ էր աւետում հաւատացեալներին:

Առաւոտեան թուչունների երգերի  
տակ զարթնեց .. Բաց արեց եր հօր թու-  
զած հին գիրքը մագաղաթեայ, իմաստու-  
թեան գիրքը ու կարդաց.

— Դու ես սիկվար, չկայ, չե եղել և  
չելք կայ՝ երգ, գինի և կին ...

Հատ էր կարգացել այս տողերը,  
ըայց երբէք չեր ապերել ու չեր հասկա-  
ցել... ահա թէ ինչու հայրը այս գրքի  
այդ երեսում գրել էր... «Իմաստութեան  
գիրք»...

Ուրեմն նիւթապէս ապահով գեռ չի  
նշանակում երջանիկ... Իմաստութեան  
գիրքը շարունակում էր. «վերցրու կեան-  
քեց, որքան կարող ես և աշխախ, որ  
երբէք սիրտդ դատարկ զինի».. Միայն  
այսքանն էր գրում:

Հայրը իմաստութեան գրքի այդ երեւ-  
սում գրել էր, որ գիրք գրողը այստեղ  
վախճանել է... Միայն այսքանը:

— Ես կշարունակեմ—մըմնչացնա...  
Գուրս եկաւ պատշգամբ, կարծես ծու-  
զիկները երփներանդ աչքերով կանչում  
էին նրան: Այսերքի ծաղիկների ըուր-  
մունքը շոյեց մայրական քնքշութեամբ  
նրա ճակատը... Նայեց երկար, ամեն ինչ  
գեղեցիկ էր ու լաւ, ամեն ինչ ուրախ էր  
և ապրում էր իր կեանքով:

— Ծաղկեր իր բայրն ունի, ինքն է  
ծծում և ապա ծաւալում մեզ, ալեւ իր  
լոյսն ունի, ինքն է վառւում և ապա  
փռում մեզ վերայ, թուչունները երգում  
են, որ իրենք զմայլւեն... Զէ անցեալ  
օրւայ կալանաւոչը ինքը իւր համար չէր  
հաւասում այն աստուծուն, որին շա-  
տերն են հաւատում: Կալանաւոչը երջա-  
նիկ էր իր շղթաներով և իր չհաւատալով  
իր համար... ու կապարէ խօսքերով ծանր  
ու հնչուն մըմնջաց. «Միթէ բոլորը հա-  
ւատում են»...

— Մէկիկ, մէկիկ անցաւ նրա հոգով  
մարգկանց հոգու իւրաքանչլւը ապրու-  
մը, շար և շար, ծանր...

— Այո՛, հաւատալը, չհաւատալը իւրա-

համար, մեր հոգու կեանքն էլ իրա համար։  
Այս, այս... թերես... Ո՛չ, ոչ մի  
թերես. ամեն ինչ իր անկախ կեանքն  
ունի... այս, իսկ Ես, հաւատում էի...  
ուժ, ինչպէս դատարկ է սիրոս... Դա-  
տարկ. ամեն ինչ պատահում է... Երէկ  
ովկեան էր հոգիս ափից ափ ծփացող, իսկ  
այժմ ափից ափ իմ ովկեան հոգին դա-  
տարկ է և այնպէս խորը, վախենում եմ  
նայել այնտեղ...

II.

Արեելքի մի չքնաղ առաւօտ երե-  
տառարգը կանչեց և մօտեիներին, ուսոնց  
հեռացրել էր զղեակից, որ ինքը «Յաւետե-  
նական ճշմարտութեան» մասին մտածի։  
Հրամայեց մունետիկներ ուղարկել աշ-  
խարհե բոլոր ճայրերը, բերել տալ երգեշ-  
ներից լաւագոյն երգիչներին, զեղեցիկ-  
ներից գեղեցիկ կանանց և զինիներից  
ամենալաւ գինին։ Եւ երբ ամեն ինչ  
պատրաստ էր, բացեց սեղանը, երգե,  
զմայլանք բերող երգի հետ ծորաց արեւ-

երեքի հրակոցլակ, արեելքի արեկի պէս  
պուրպուր գինին։ արեելքի ծաղկանց  
բուրմունքի պէս գեղեցիկների համբոյը-  
ները ծովեցին զղեակի պարիսպների ան-  
գին։ Նազը աւանները կայլակում էին արեկի  
տակ, թաւշեայ կանաչը, արեելքի գոր-  
գերի պէս, զարդաբել էին պարեզը, հա-  
զար ու հազար պատզներ ժպառում էին  
մայր արեկին զոհունակութեամբ, հազար  
ու հազար թռչուններ իրենց երգն էին  
ծորում արեելքի արեկի տակ և այդ ըոլորի  
հետ վանդակած վագրերի ու առեւծների  
մռնչեւնն էր զօղանջում։ Եւ այդ ըոլորը  
օրհներգում էին արեկին ու երիտասար-  
դին...

Երգիչները նւազում էին ու երգում  
վայելքները ու օրէնքներն աշխարհի, գե-  
նին ծորում էր համ ծորում։ Երիտասարդը  
առնում էր բաժակը, խփում էր գե-  
ղեցիկներից գեղեցիկների բաժակներին։  
Կարծես գտել էր հօս որոնած ճշմարտու-  
թեւնը։ Հոգին ծաւալւում էր և նա այժմ  
սիրում էր բալորին, ըոլորին ինչ կայ, ինչ  
անցել է ու պէտք է դայ։

Տարբեներ ու տարիներ նրա յարկի  
տակ երգը չլսեց, դիմին չպահասեց. իսկ  
երբ գեղեցիկները կնճռոտում էին, արեւ  
եթի վագրերը և ասիւծները յօշոտում  
էին նրանց ու նորից գեղեցիկներ էին  
դալիս: Ամեն գեշեր երգի նւազների  
տակ իջնում էր պարտեզ գեղեցիկների  
հետ, լողանում էին զովաշունչ շագրւանի  
տակ, վերագանում էին գղեակը, համը  
բուրում էր սոլոր գեղեցիկների մարմին-  
ները մարմառեայ և քնանում մետաքսէ  
անկողնում:

Թագաւորները նախանձում էին ա-  
ռեւելի երիտասարդին. նա ապրում էր  
երգով, հարբում կնոջով ու գինով և նրա  
սիրառ լիքն էր, ովկեանի պէս լիքը...

III.

Ապրում էր արևելքի իմաստունը  
ջահէլ ու երջանիկ այժմ, մէջ որպէս ինքը  
իմաստութիւնը: Նրա սիրառ վառ էր,  
որպէս արեւ արևելքի... Այլևս իմաս-  
տութեան գերը չէր բանում, չէր ուզում  
անգամ մտածել...

— Եղաւ ինչ որ լինելու էր, կլինե-  
նու որ լինելու է—ասում էր նա գեղե-  
ցիկներին ու իրեն: Նրա համբաւը տա-  
րածում էր ափերից ափ, արևելքի եր-  
գիչները ծովերից-ծով թափառելով եր-  
կում էին իմաստուն արևելցու երգը...

— Հարցել է հոգիս, ինձ ինչ աշ-  
խարհը. չէ այժմ այն էլ իմն է—զուրու-  
կայ. բայց և ամեն ինչ իմն է ինչպէս իմ  
միսը... Իմ հոգումն է որ ապրում է աշ-  
խարհը: Եթէ առաջ աշխարհի մէջ էլ որո-  
նում ճշմարտութիւնը, այժմ իմ մէջ եմ✓  
որոնում: Եթէ առաջ աշխարհն էր ինձ  
համար, հիմա ես եմ աշխարհի համար...  
Հոգիս կուսական անտառ է ուր վիստում  
են օձերը թագապարդ, գեղեցիկ ու իմաս-  
տուն... ոսկիարաշ գաղանները, ամե-  
նանւիրական երգն էլ է ապրում իմ հո-  
գում, երդ ու գաղան ապրում են մեր  
հոգում, առանց մէկի, չկամ եւ ես, և գու:

Մատածում էր ու ապրում այս-  
պէս... Արևելքի երգը արենագոյն հոսում  
էր կայլակ առ կայլակ գղեակի երկաթէ  
պարիսպների ներսը ու ծաւալւում աշ-

Խարհի վերայ... Խջուռմէր պարտէզ, շույում էր վաղսերի ու առիւծնէրի մէջքերը; Պուրպուր գինին, ուղիչս իմաստութեան խօսքեր, պարպում էր ջահէլութեան, վայելքի, լենթութեան ու արևի կենացը, հզօր ու անյազթ ապրում էր արեելքի իմաստուններից իմաստուն երիտասարդը...

— Ո՞վքան է անցել այն օրեց, երբ իմաստութեան գերքը ընկել է քո ձեռքեց, հարցնում էին իմաստունին գեղեցիկները:

— Զգիտեմ, ասում էր նա, ձեզանից եւրաքանչեւը մի յաւիտենականութիւն է փռում իմ հոգու վրայ, երգի ու գինու եւրաքանչեւը կաթելը նոր անձանօթներ է հրաշակերտում իմ հոգում:


— Ես թագաւոր եմ ու Աստուած: Զեր ամեն մի համբոյը հետ ես նորեց եմ ծնւռում, ու ապրում երգի ու գինու իւրաքանչեւը կաթելի հետ մոռանում եմ թէ մարդ եմ և գուք լինձ մարմին ու գայաւրաններ էք տալիս... Սպասեցէք, հողը ես պէտք է երգ շնեմ. ձեր համբոյըններն ու երգը պէտք է որ ինձ տան վեհմ ջահէ-

լութիւնը... Խմաստութիւններից իման տութեան խօսքն եմ ասում ձեզ... «Ամեն ինչ մարդու համար է, ասացէք, որ չարխսուն» . . .

Հոսում էր երգը, այնքան քնքուշ, կարծես երազ էր իջել արևելքի վերայ... Երբեմն իմոստուն երիտասարդը հրամայում էր լուել երգեչներին. մկանում էր գեղեցիկները երգը թախծոտ ու խոսունկ, որ ծորում էր արևելքի վերայ, որպէս ոսկիածոր արևի շողեր...

— Թող ընդ միշտ լուի երգեչների երգը, ասում էին գեղեցիկները արևի որդուն—, թող հոսի գինին, սերեր միայն մեզ և ունկնդրեր մեր երգին, հարբեր մեր համբոյըններով, որ աւելի հարեցնող է ծորում, քան արևածոր գինին արևելքի...

— Թող հնչի երգը վայելքը, ինչպէս եմ մարդու կեանքը, կարճ է առում, երգը մեր կեանքին յաւիտենականութեան բոյըն է շնչում և կինը նոր գառնում է գեղեցիկ վայելք, գինին թող հոսի, ապա թէ ոչ կսառչի ու կիջնի հոգիս, գուք կտաքացնէք հոգուս, գինին լենթութեան



փրփութը կփռե հոգուս վերայ... հիւսէք  
կեանքը ամենից:

— Նւագէք, հարբէք, համբութէք շրբ-  
թունքներու... Ես մեծ եմ, որպէս արևել-  
քում արտասանած իւրաքանչիւր խօսք:

Հնազանդ երգում ու պարում էին  
գեղեցիկները իմաստուն երիտասարդի  
գողեակում ու ամեն ինչ երիտասարդին  
թուում էր անմահ ու վսեմ, գեղեցիկ ու  
բարի...

Գեղեցիկներն ասում էին երիտա-  
սարդին, որ մէկ էլ բանայ իմաստութեան  
գերքը, չկաց արգեօք մի բան, որ պակասի  
իմաստունին...

— Ամեն ինչ կայ և իմ հոգումն է...  
իմաստութիւն, աշխարհ, աստւածներ,  
արև, թագաւորներ, ծով ու ցամաք...  
կան, բայց իմ հոգումն էլ կան... ամեն  
ինչ, ամեն ինչ... Հաւատ էլ կայ... Զէ  
սէրը հաւատ է առանց հաւատի արևի  
մօտ անդամ ցուրտ կլինի... Ամեն ինչից  
յետոյ հաւատն է..., Եթէ չհաւատայի,  
ինչպէս կոմքէի ձեզ. Ի՞նչպէս կոմքէ ձեզ  
երգը, գեղեցիկների մայրեր... . . .

— Նւագէք, երզը ինձ անմահութիւն  
է ատիս, գինին խենթութիւն, ձեր մար-  
մինը չունչ ու ջահէլութիւն:

Եւ երգի իւրաքանչիւր նւագի հետ  
ծալ առ ծալ, լուրզունքի հետ միասին,  
փոշին էր նստում «Խմաստութեան գրքի»  
վերայ...

IV.

**Տարիներ անցան . . . Երիտասարդի**  
իմաստութիւնն աւելի էր խորանում:  
Խմաստութեան իւրաքանչիւր կաթիլի հետ  
նրա աչքերը գաւնում էին աւելի նւազ,  
որպէս վերջալոյսի հանգչումն, իմաս-  
տութեան իւրաքանչիւր հիւսւածքի հետ  
ձեռքերին մի նոր խորշոմ էր աւելանում:  
Խմաստութեան իւրաքանչիւր խօսքի հետ,  
մի նորւր խորշոմ էր թառում նրա ճա-  
կատին, որի վերայ այնքան համբոյըներ  
էին շնչել... Կամճագ-կամճագ մռայլում  
էր երիտասարդը... . . .

Երգի նւագների համաշափ զարկեցով  
մէկ օր երիտասարդը մէնակ, առաջին

անդամ մէնակ, պարտէզ իջաւ. իջաւ  
այցե այն բոլորին, որոնց սկսում էր...  
Զաշմանքով նկատեց նրա իմաստուն  
հոգին, որ պարտէզը այլես այն չէ:  
Թուռում էր, թէ մի քնքոյշ թամիծ է իջել  
պարտէզի վերայ. շուշաններն անդամ  
քիչ կռացել, փոխւել էր և նոցա բոյրը,  
փոքրիկ խորշումներ էին գաս և գաս  
նստել նոցա կրծքին: Գաղանները ոսկիաւ  
բաշ այլես առաջւան պէս չէին նայում  
նրան, թուռուններն էլ առաջւան պէս  
չէին երգում գեղեցիկ կտուցների համաւ  
չտի ճշկ-ճշկով: Մօտեցաւ շագրւանին.  
Նա էլ այս այնդամ ինչ որ տիսուը միաւ  
լարութիւն ունէր եր չըփ-չըփոցի մէջ...  
Նայեց աւազանի վճիռ, որպէս կոյսի աչ-  
քեր, ջրին, աւելի մօտեցրեց գլուխը,  
նայեց, երկար նայեց. շաղ տւեց մազերը  
ճակատի վերայ, ջոկեց, հանեց մազերից  
մէկը, նայեց... ճերմակել էր...

— Եղաւ ինչ որ պէտք է լինէր, իսկ  
երգը, իսկ գինին, իսկ կի՞նը: Ճերմակը  
հիւսւած յաւետենականութեան ճակա-  
տին, ճերմակը իմաստութեան գանդուր-

ների մէջ... ուժ, լինչու...

Մէկիկ-մէկիկ մտքով թէրթէց «իմաս-  
տութեան գլուխը». այդ մասին ոչինչ չէր  
կարդացել:

Մոայլւեց, վերցրեց ճերմակ ու եր-  
կայն մազը, զցեց ուսմին, որպէս մուրա-  
ցիկն իր ըեւը, ծանը, աւելի իմաստուն  
զարձած, զլիսեկոր ու մտոր վերագարձաւ  
զգեակը երգակարար...

Հրամայեց, որ երգը լուի, որ զինին  
այլես չոսի ու էլ գեղեցիկները չմծաե-  
նան իրեն: Հանեց ըեհեղեայ շորերը, հա-  
դաւ ճամբորդական զգեստներ, երկաթէ  
արելս հազար, պողպատէ ցուպ առաւ,  
վերջին անդամ նւազել տւեց երգիչնե-  
րին, պարպեց վերջին անդամ զգեակի մէջ  
արեւելքի զինին, համբուրեց գեղեցիկների  
աշքերը, արտասուեց իմաստունը առաջին  
անդամ, արցունքները ընկան նրա կրծքի  
վերայ ծանը ու ըաղխուն, ճամբեց ըուլո-  
րին, փակեց զոները, այցելեց պարտէզին  
ու գաղաններին, զուրս եկաւ, փակեց  
երկաթէ զարպանները, կանգնեց զգեակի  
առաջ... «Դու, իմ ջահելութեան օրու-

ըան, իմ դղեակ, տւեր ինձ սուրբ միսը  
և գերեզման փորեցիր և ծերութիւնը ըեւ-  
րիր ինձ համար: Մահ, ուզեցայ քեզ թա-  
ղել երգի, հարբումի ու վայելքի տակ,  
դու չմեռաց, դու կառ և մի օր դուսոս  
կըաղլսես, դու կդաս, դու կանչում եռ  
ինձ»...

V.

**Բոնեց արեելքի շեկացած ճամբա-**  
**ները, անցաւ կապոյտ ծովերը, որոնց**  
**վրայ կարապնեսը իրենց վերջին երգն էին**  
**ասում ու ինպութեամբ ջուրը թափւում,**  
**անցաւ ոսկեացած սարերով, որոնց կըսծ-**  
**քին ժաղիկնեսը իրենց ըոյըն էին փուել,**  
**չընեց ոչ դէշեր, ոչ ցեսեկ:** Արեելքի  
**աստղերը գոհար առ գոհար շողշողում**  
**էին նրա խմասուն հոգում, ժաղիկները**  
**նազանքով համբուրում էին խմասուն**  
**արեելցու ոտները, նա զնում էր, հա-**  
**զնում... Աչքերը աւելի էին խորացել ու**  
**մշուշւել, որպէս ծովը արեադպին, ալիք**  
**ու ալիք ճերմակն էր հիւսւում նրա**

վարսերին, ակօս առ ակօս կնճիռներն էին  
թառում նրա գէմքին, նա գնում էր, հա  
զնում... Որպէս քուն, իջաւ արեելքի մի  
խաղաղ երեկոյ, մութը նոր էր պարուքել  
իմաստունի ճամբէն, յոդնած, աւելի  
իմաստուն դարձած, թակեց մի անձանօթ  
քաղաքի երկաթէ գարպասը:

Ներս մտաւ, ամեն ինչ լաւ էր. նրան  
առաջին խոկ հայեացքից զիմաւորեց քա-  
զաքի գերեզմանատունը: Խօտեցաւ. շատ  
վաղուց էր չէր տեսել, չէր էլ մտածել  
գերեզմանի մասին:

Մե ալեհեր ու ցնցոտիածածկ ծե-  
սունի իր պառաւ կնոջ հետ իրենց միակ  
որդուն էին թագել ու նստել գերեզմանի  
շուրջը որպէս հրեշտակներ, խունկ էին  
ծխում...

Նայեց, մռայլւեց նրա իմաստուն  
հոգին. շուռ աւեց երեսը, զուրս եկաւ  
քաղաքից, գարպասները շունդով փակ-  
ւեցին. յենեց պարսպին դաւազանը,  
վայր զըսեց մէջքի բեռը փոքրեկ, զըց  
գլխի տակ, պարբսպների տակ պարկեց  
ու առաջին անգամ քնեց...

Հեռաւուր երկը թագուհի մայրը  
տութեամբ լի աջերը, ճշմարտութիւն  
որոնող հայրը գուրգուրում էր նստ զան-  
դուրները և ասում. «Դնա, որոնիր և  
իմաստութեան գրքի կիսատը լրացրու:  
Արեւքն է իմաստութեան հայրենիքը,  
ծարաւ հոգիները արեւքնը ուն որոնել  
ու մեռել, իմաստուները արեւքնը ուն  
իմաստուն գարձել: Ե՛ւ, զաւակս, որոնիր  
և լրացրու իմաստութեան գրքի կիսատը:  
Արեւուաքը իմաստութեան մի մասն է  
տաել, ոչ, կըկնել է Արեւքնը տաածը...  
Արեւ հայրենիքը, խորհրդաւոր... որքան  
որոնես այնքան աւելի կիսատանայ արե-  
ւքնը, գեղեցիկ ու բարի, գեղեցիկ, գե-  
ղեցիկ արեւքն է հզօրազօր զարթնում,  
արեւքն է սկսել, արեւքն է պէտք է  
շարունակէ, սոլոր աջերը, սոլոր քայ-  
լերը, սոլոր մաքերը պէտք է ուզզւին  
գէպէ արեւք, իմաստութեան ու մշտին-  
ջենական ըասու հայրենիքը, և դաժանու-  
թէն չարութեան հովիտ արեւքը: Գնա,  
իմաստուն որդի և որոնիր, որոնիր...

VI.

Արեւքնը ըոցոտ արշալոյսն էր տի-  
ւականօրէն ու հզօր նայում աշխարհին  
ու քնած իմաստունին: Միրամարգները  
մնացրել էին իրենց թեւքը և հով արեւ  
քնած արեւքնը, վագրերն ու առիւծ-  
ները զբել էին գլուխները իմաստունի  
ոտքերի առաջ արթուն, հրացայտ աչքե-  
րով նայում էին իմաստունի շթունքնե-  
սին հնագանդ ու բարի...

Զարթնեց, շոյեց վագրերին ու ա-  
ռիւծներին, համբուրեց սիրամարգներին  
ու հոգին լցւեց աշխարհածաւալ խնդու-  
թեամբ:

Յուրու զարթնեցին. առիւծներն ու  
վագրերը զոհ հեռացան, թուչունները  
թափ ունին իրենց ոսկեացած վեաուր-  
ները, քսիցին կառուցները շիկացած քա-  
րերին ու թռան:

Իմաստունը շոյեց ճերմակախառն  
մազերը, գեց ուսին եր փոքրեկ ըեռը,  
առաւ երկաթէ ցուղը ու ճանապարհներով,

Երկար, որպէս եր մոքերը իմաստուն, ան-  
հատնում ու յարահոս... Գլուխը քաշ,  
մտախոհ, գնում էր իմաստունը, հա-  
գնում, մտածում էր ու ապրում...  
Փռւում էր նրա առաջ մայր ընու-  
թիւնը հիափանչ...  
«Այսպէս է եղել և իմ պապերի, իմ  
հայրերի օրով... նոյնը, նոյնը...  
Մտածում էր ու համաշափ քայլե-  
ռով կոխում էր արեելքի սոկի փոշին:  
— Թողի զգեակո շքեզաշուք, որո-  
նող, արեներով լիքը աչքերո զցել եմ  
այժմ աշխարհին, նայում եմ դալերին և  
անցածին... Ո՞վ այսպէս արեց... կընձ-  
ռուում էր ճակատը, որպէս աւագուտ  
անապատը մրկից յետոյ... «Ապրելու  
համար եմ քո գերեր ընկել նւերական  
աշխարհ, զեղեցիկ ու ծնունդների մայր  
որոնում... չէ չէ կարող մնալ զգետ-  
կում և լուռ ճերմակել և յուսահատօրէն  
մեռնել... Պէտք է իմանամ, զուրս եմ  
մնալ, աշխարհ... Ո՛չ, չէ կարող  
բեց, ես էլ իմը պէտք է կատարեմ... Զէ,

չէ կարող մնալ... Գալիս եմ նայելու,  
ապլելու քեզ աշխարհ և աշխարհանա-  
լու»...  
— Ինչպէս գեղեցիկը խորշումում է,  
ինչպէս գեշեր ու ցերեկ է լինում, այն-  
պէս էլ ես պէտք է զուրս գայի զղեակեցս  
հայրենի...  
Գայլում էր իմաստութեամբ պայ-  
ծառացած: Հազարարիւր հրապոյժներով  
աշխարհը կանգնում էր նրա առաջ...  
— Այսպէս է եղել հեքիաթային դա-  
շերում, կամ երբ շունչ չկար... Բայց,  
բայց ո՞վ է այսպէս արել, ո՞վ է վառել  
աստղերը, ո՞ւմ հզօրազօր ձեռքն է գրել,  
գուցէ և ստեղծել... Ո՞ւմնից պէտք է  
հաշիւ ուզեմ իմ ճերմակների համար, ո՞ւմ  
զուրս պէտք է բաղկեմ, ստանամ ու  
յետ զառնամ զղեակս ջահէլութեան:

— Հին իմաստութիւնն ասել է, Աս-  
տած է ստեղծել: Կանգնում եմ ահա  
իմացածի և իմանալիքի, անյայտի և յայտ-  
նիկ, հոգու, արել, ծովի ու ցամաքի և  
Աստած քո հանգէմ, ճերմակներս եմ  
ցոյց տալիս. հարցնում եմ, ո՞վ է ստեղծել

քեզ, ստեղծիչ ամենի, լինչ է քո անունը...  
ինչու է այսպէս, ինչ որ կայ: Արևելքի  
արևել տակ բուսած շուշան է հոգիս և  
շուշան տապ է և շուշան մութ. լոյս ու  
ջուր եմ ուզում, ովկ պէտք է տայ: Ասա,  
ովկ է ստեղծել քեզ աստւած, կամ յետ  
դարձու իմ գանգուրներս ուե, ջահել,  
ջահելութիւնս տուք:

— Զկանս... աստւած եմ ես, բոլորը  
աստւած են, քարն էլ, ջուրն էլ, եսազն  
է... մարդն էլ. ամեն, ամեն ինչ աստւած  
չեմ խաբում ինձ: Ոչինչ չի ստեղծւել,  
այլ կայ և աստւած է, բաւական է...  
նայեց կարօտվ ծաւալւող ճանապար-  
հին... «Ամեն ինչ աստւած է մէնակ...  
իմաստութեամբ եմ ասում»...

— Խլում եմ քեզանից աշխարհը,  
խլում եմ քեզանից քո անունը. աշխարհը  
տակս եմ աշխարհին, ամենին, ինձ: Աշ-  
խարհը սոլորինն է և իմն է: Վարդի հա-  
մար աշխարհը վարդը է, հոգու համար  
հոգի, քարի համար՝ քար, ինձ համար

աշխարհը ես եմ: Ոչ մի նոյնութիւն, ոչ  
մի զոյգ, ամեն ինչ եղակի է, ասուած է  
ու ապօռում է...

Թւում էր իմաստունին, թէ հայը  
իւր հոգումն է և լսում է որգուն:

Արևելքի մետաքսարաշ կարաւան-  
ները անցնում էին նրա կողքով զբրնդ-  
հա զբրնդ: Յիշում էր գղեակը, «Իմաս-  
տութեան գիրքը»...

Կարաւանների փոշին ծալ առ ծալ  
նստում էր քնքօրէն նրա գանգուրնե-  
րին, արտեանունքներին, կռացած մէջ-  
քին: Շողում էին նրա աչքերը անտակ  
ու անեղբ կմասառութեամբ: Գիշերները  
թառում էին նրա ուսերին, ցերեկները  
փաթաթում նրա ոտներին, նա գնում  
էր, հա գնում... երգում էր նրա հոգին  
ու կմասառութեամբ պայծառանում:

Անտառները, քարերը, թուշունները,  
խօսում էին կարծես նրա հետ...

— Քանդի՞ր, քանդի՞ր լեզւիդ կա-  
պանները ու խօսիր ինձ հետ իմ աշ-  
խարհ, իմ բնութիւն, կարօտ եմ քո խօս-  
իքն, քո գաղտնիքներին, քո հաւաաներին:

Թւռւմ է նըան, թէ աւազի հատիկ  
ները, թփերը ցաւ են զգում, երբ տրու  
րում են նոցա...

— Կսի՞ր, ականջ պիր հոգի, ինչպէս  
աշխարհը խօսում է ինձ հետ ամեն ինչ,  
կեանք է, շունչ, հոգի... Միթէ ես հե-  
քիաթէ մէջ եմ ապրում, ուզ ամեն ինչ  
քար է, լուսութեւն, համը, կոյր... Հէյ,  
երդ է որ կլոեմ, աշխարհը երդ է, մի  
գողարիկ երգ, մի անմեռ երդ, որ ամեն  
ըովէ նորից ու նորից է երգում և ամեն  
ինչ, և ամեն ոք եր երդն է երգում...

Արեամուտ էր, շողերը մեռնում  
էին գանդաղօրէն ու նազանքով. թուում  
էր իմաստունին, թէ իր հոգուցն է այդ  
ամենը մեռնում:

— Մահը ամենուրեք արեկի մօտ. իմ  
ճանապարհին, գուրս արի, քե՛զ, քե՛զ եմ  
վնատում գօտեպնդած, յայտնւիր, առա  
անունդ և ինչո՞ւ գու կաս...

— Հէյ, գեռ երկար է ճանապարհո  
ուրեմն... Ողջոյն քեղ թափառական  
կեանք, որոնումների հայրենիք, ողջոյն  
և քեղ իմ սրբազն արեելք, արեների,

իմաստութիւնների օրօրան, ի՞մ արե-  
ւելք...

Մութն կցաւ: Քայլում էր ու մտա-  
ծում, ապրում էր անցածն ու գալերը  
մշուշու: Անցնում էր զերեզմանների  
վայով, անցնում էր հոյակապ քաղաք-  
ների սուելներով. Լուում էր ժովերի եր-  
գը, գնում, հա՛ գնում ու երգում էր  
աշխարհի հետ միասին...

— Արեն անցաւ... Վաղը կիսե շո-  
ղերը աշխարհի վերայ, պայծառ աչքերով  
բարի լոյս կասի աշխարհին. գուցէ և ես  
չլինեմ, չէ մահը մեղ հետ է և ես չգի-  
տեմ, միւս ակնթարթիս կենդանի կլինեմ  
արգեօր... Եկայ ու կդնամ անցորդի  
պէս...

— Ինչպէս, միթէ չի մնայ ինձանից  
ոչի՞նչ և ոչի՞նչ... Իմ իմաստութիւնը ես  
շնչել եմ աշխարհին, իմ խօսքերը փուել  
եմ արեելքի վերայ, որպէս արեն իր շո-  
եմ արեելքի վերայ, որպէս արեն իր շո-

ժպաց արշալոյսի թովչութեամբ ու  
պայծառութեամբ:

— իմ երգն եմ ծովել աշխարհի հուզում, աշխարհի ունայնութեանը իմ «այո»ն եմ ասել... երգն իմ աշխարհն է, աշխարհը երգ է, աստւածներով, նպատակներով լեցուն:

Նոյեց ճակատը, սրբեց քրտինքը, որ կաթիլ առ կաթիլ ցօղում էր իմաստուշ թիւնների գերեզման հողը, որպէս իմաստութեան խօսքեր:

Քայլում էր օտար քաղաքների պահապների տակով. զգում էր, թէ ինչպէս թիթեռների պէս թռչում են վայելքից վայելք և մահը այրում է նոցա. «Որքան ուրեմն են նրանք երենց կեանքով ու մասնում էր ու սիրում և քայլում էր յոդածօրէն:

— Որքան չար է անմահութեւնը և որքան բարի ու գեղեցիկ է մահը իր որոշ նումով... ինչպէս... Ո՞վ ասաց բարի ու գեղեցիկ է մահը. այն ժամանակ ինչու թողի դղեակա... Ո՞վ ասաց այս իմ հուզուն... չգիտեմ, չգիտեմ...

Պայծառ, որպէս իր իմաստութեւնը, ժալտաց իմաստունը. քայլում էր, զուրդութեամբ հոգումը լի հոգում. սիրեց աշխարհը և քայլեց մտածկոտ...

Միքամի պէս կանգնում էին նրա հոգու առաջ հեռաւասը, զուցէ և մեռած ձնողները, խօսում էին նրա հետ, սիրում ու ժամանում էին նրան և թռում էր, թէ զուրգուրում են իրեն քնքութեամբ, համբուրում, որպէս երբեմն օրօրոցում: Ցնծագին ու հպարտ շարժում էր գլուխը, որպէս արքայ առիւծն անապատի, շոյում էր մազեբը ճերմակախառն, որոնց վերայ մի հզօր ճեռք անյայտօրէն ձիւն էր մազել, գնում էր ու երգում.

— Իմ իմաստութեամբ, իմ որոնումով օրհնում եմ Զեզ իմ ձնողներ. վամոք և օրհնութեւն Քեզ, Քո երկունքին սրբազն իմ թագուհի մայր, իմ իմաստուն մայր: Օրհնութեւն Զեզ, որ ինձ տւեր աշխարհին, որ այս երգի, հրապոյը ու խարհին, որ այս երգի, հրապոյը ու խարհին, աստվածանայ ինձ համար, աշխարհի համար...

— Աշխարհը երդ է, աշխարհը պէտք  
է ապրել: Զգիտեմ որտեղից եմ եկել,  
բայց պէտք է իմանամ ի՞նչ է իմ անունը  
ծերութեան, մահու և աշխարհի հանդէպ:

Սերեց իլեն ու իմաստութիւնը իւր,  
սիրեց աշխարհը ու քայլեց արեւազարդ  
մամբաներով:

Անցնում էր զիւղերով ու քաղաք-  
ներով պարսպապատ, որոնք կապած էին  
մայր հողի կրծքին, որպէս մանուկը փո-  
թողիոտ դիշերին իւ մօրն է փաթաթւ-  
ում: Ալլում էին հողի վերայ ու հող  
գառնում: պատմում էին իրար պապե-  
րից ուսած հին, հին հերիաթներ: Իմաս-  
տունը գիշերում էր երբեմն նոցա մօտ.  
Նայում էին նրան ու փոփում ինչ որ  
անձանօթ խօսքեր: Արշալոյսի առաջին  
շողեր հետ, թողնում էր ըուղին քնած  
ու հետանում:

Դատ բան էր աեսել, լսել ու ասլ-  
րել: Նրա համար շատ հանելուկներ էին  
պարզել: բայց էլի նրա հոգում մի եր-  
կիւղ կար, որից չէր փախենում բնաւ.  
քաղցր էր այդ զգացմունքը: Քայլում էր

Կա զիշել, ցերեկ և ամեն ինչի մէջ որո-  
նում էր եր երկեւզը. իսկ պատասխանը  
էր հոգուցն էր սպասում:

Միտքն էին ընկնում վայելքները  
գղեակի, յիշում էր և զգիտէր ում հետ  
կապւած, ով է հիւսել և ինչու: Բո-  
լոր անցածը թուում էր նրան մի պար-  
տէղ, որտեղից անցել է, նայել ու շու-  
շաներ քաղել, որոնք թառամել են  
վազուց:

Քայլում էր և կարծես երազում  
լինէլ. Երբեմնակի անցորդների ողջոյնը  
զարթեցնում էր նրան, սիրալիք ողջու-  
նում էր ու անցնում. քայլում էր ու  
երգում հոգեթով.

Ունայնութիւն, ունայնութիւն . . .

Ուկի, ուկի երազներ . . .

Ի՞սկն է այսպէս ինձ կապել

Ունայնութեան այս երգին . . .

Ո՞վ սկսեց երգը այս,  
Ժպիտ, համբոյք, հաւատ, սէր . . .  
Զահելութեան կարօտներ,

Ձահէլութեան զանզուրներ . . .  
իմ սուրբ, իմ սուրբ հաւատներ,  
Ո՞վ է թաղել մեզ ջահէլ . . .

Դերեզմաններ հիշն ու նորի  
եւ անանուն եւ անյայտ.  
Ո՞վ է փորել ու մեռել,  
Ո՞վ է լացել ու չկայ,  
Ո՞վ է սիրել ու ատել,  
Ո՞վ է երգել ու չկայ . . .

Հիշն ու մեռած աստւածներ,  
Սոսկում սիրուն ու քնքուշ.  
Արեւածին իմ յուշեր,  
Դութէլ էր դուք էլ էք մեռել.  
Լոյս կանչումներ նորա-նոր.  
Ա՛խ, չզիտեմ, չե՛մ ուզում . . .  
Ինչ սիրել եմ՝ քուն, օրօր,  
Մի նոր հերեաթ եմ հիւսում . . .

Երեւեմն երկինքը լալիս էր նրա գուլ-  
ևին, կոթ-կաթ, միաւար, նա քայլում  
էր ու օքնում ամենին, ամենին . . .

VII.

Աւ մէկ օր բարձրացը ծանրախոհ  
դրուխը ու թակեց օտար քաղաքի պա-  
տեսպների երկաթէ գարպասը:

— Ո՞վ ես, ձայն տւին գարպասի յե-  
տեից :

— Ուզոնող արեւելքն եմ, ըմց արէք :

— Մենք ոչինչ չենք որոնում . . .

— Բաց արէք, ես հողեղէն իմաստուն  
եմ, ես մահկանացու եմ ու անմահ :

— Քո անմահութեան համար, բայ  
եմ անում :

— Փոշոս ու պայծառ, որպէս ջա-  
հէլութիւնը թափառուն, հոյակապ, որ-  
պէս արեւելքի արմաւ, ներս մտաւ գե-  
ղեցիկ իմաստունը, ողջունեց արեւելցու-  
ողջունով, նայեց շուրջը արձւի հայեաց-  
քով, թափ տւեց արեւելքի ոսկի փոշին  
ուներեց ու մաղերեց և յաղթական առաջ-  
անցաւ : Նայում էր չորս կողմը, գերեզ-  
մանոց էր սրոնում . . .

Ալլեց այդ քաղաքում, գերեզմա-  
նոց չգտաւ . . . Ժահէլ են այս-

տեղ բոլոր», մտածեց նա, բայց ապրում  
էր նրա իմաստուն հոգին, որ ոչ ոք իմաս-  
տուն չէ...

Նրա լուրը տարածւել ու ծորել էր  
ըոլորի սրտերը, որպէս արեւելքի երդ:  
Հաւաքւում էին նրա շուրջը, խօսում էր  
իմաստուն կերպով փողոցէ փողոց շրջե-  
լով: Բոլորը զմայլանեցով լսում էին արե-  
ւելքի կարմիր խօսքերը ու սիրում, աւելի  
էին սիրում նրան...

Դիշերը քնանում էր բաց, մեծ եր-  
կնքի տակ, բանում էր հոգին ասողերին  
ու գեշերին, իմաստութեամբ լցում էր  
հոգին... աստղերը կարծես կաթել առ  
կաթել լոյս էին ցնցուցում նրա հոգուն  
և նա տեսնում ու ապրում էր աշխարհը,  
մութն ու գալիքը... Յիշում էր «Իմաս-  
տութեան զերքը», նրա պակասը: Ժղո-  
տում էր նարգիզի առասպելական ժպի-  
տով ու հոսում էր իմաստութիւնը մար-  
դարձական, որպէս արևի շողերը անբաւ  
ու տաք, քաղաքի պարհապների մէջ...

Բոլորը սկսել էին կնճռուաւել, նոյն  
եսկ մի քանիսի մագերին ճերմակն էր

հիւսւել ու բոլորը ապրում էին հմայւած  
ու գեղեցիկ...

Վէկ օր իմաստունը խօսելով, եւը  
ուկնդիմերի հետ զուրս եկաւ քաղաքի  
պարիսպներից: Գարպաստապահն անգամ  
գիտէր նրան ու պատկառում էր նրանից,  
խոնարհ ճանապարհ տւեց նրանց...

Փաղաքից զուրս մի քարայր կար,  
որին «Գեղեցիկ անյայտութեւն» էին ան-  
ւանում: Ունկնդիմերից մի երետասարդ  
զատեց միւսներից, որպէս հիւսնդ կր-  
սունկն իր երամեց, զնաց ու մտաւ  
քարայրը:

Իմաստունի խօսքերը հոսում էին  
հարսաների խնդութեան պէս, անդա-  
զալ... երկար սպասեց իմաստունը գե-  
ղեցիկ երետասարդին... նա չեկաւ...  
զերծացրեց զւարիս ու հարցրեց ունկն-  
դիմերին.

— Ի՞նչու ուշացաւ ունկնդիր գե-  
ղեցիկը...  
— Նա այլես չի դայ աշխարհ, պա-  
տասխանեցին նրան, ի՞նքը զնաց և ոչ թէ  
տարան... էլ ոչինչ չասացին....

Ապօռում էին այստեղ առանց իմաստութեան։ Իմաստունը նայում էր նրանց, ապօռում էր նրա իմաստուն հոգին, որ այստեղ արևելքի ծայրին, մարդիկ ապօռում են առանց արևի . . . «Իմաստութիւնն արև է», մտածում էր նա, — «Ապօռում են և հաց ունին, և՛ շոր, և՛ հող կայ նոցասների տակ, և՛ տաքւայ եղանակներ . . . Ծնուռում են ու ապօռում, զնում մտնում քաքայը, մթին ու անդարձ . . . ծերանում են և այստեղ, ինչպէս արևի տակ ամեն ինչ, ամեն ինչ՝ ուրեմն մահ էլ կայ . . . Սուլոր գոհ են, նոյն իսկ երջանկութեան մասին չեն մտածում . . . Այստեղ էլ մահ կայ, բայց . . . բայց մահից չեն վախենում . . .

Եւ մի օր, երբ գիշերն իջաւ քնքուշը ներշութեամբ արևելքի վերայ, վերցրեց իմաստունը իր փոքրիկ ըեռը, զբեց ուսին, տուաւ գաւազանը, ամրացրեց սաքերի երկաթէ կապերը, վերցրեց իր ապօռձը, աւելի իմաստուն գարձած, թագուն, զուրս եկաւ պարիսպներից և ուզերւեց արևելքից զուրս . . . Եւ ամեն տեղ արտաքինն էր . . .

Երես դարձրեց բոլորեց, ոտք դրեց նորից արևելքի սահմանը, օրհնեց արեւ, կրամու, օրհնեց ջահելութեւնը հոգու և արեւու ճամբաներով, շտապեց գեղի ջահելութեան գլեակը, գեղի «Իմաստութեան գեղը»։ Թեսթում էր մաքերն, ապօռում ու տեսածը. տուն էր շտապում, ըածն ու տեսածը. տուն էր շտապում, իմաստութեան գեղը, արևելքի իմաստութեան պեղը է լուացնէր . . .

### VIII.

«Բայցում էր գւարթ . . . Մազեր ձերմակել էին արդէն, աչքերը աւելի խոհուն ու բացու էին գաբճել, որպէս արեւելքի վելչալոյնը, ոտները ամուս էին, սրպէս ձեռքի գաւազանը երկաթեայ . . . սրպէս գեղեցի գայրենի գլեակը, գեղի զնուռմ էր գեղի հայրենի գլեակը, արևելքի իմաստութեւնը։

— Ո՞վ գետէ, երբ կհամնեմ, մտածում էր նա, մտածեմ, ապրեմ բոլորը, որ աշարհանամ, մեծ, գեղեցիկ ու ջահել . . . խարհանամ, մեծ, գեղեցիկ ու ջահել . . . Յոգնել էին ոտները այնքան քայլուց, գեղեցկացել էր հոգին այնքան աւելուց,

որոնելուց: Մասածում էր իր սարսափի, իր  
որոնած ճշմարտութեան մասին».

— Ո՞րն է ճշմարիտը, այն, որ հեռաւ  
ցայ ու թողի գղեակո, թէ այս անվերջ  
որոնումը:

Այնաեղ էլ մահը կար, մահը  
ամենուբեք, ամեն հոգու հետ, աշխարհի  
հետ, ինձ ու իմ որոնումի հետ և ամեն  
երդի հետ: Ափսոս այն բոլորին որ չկաց  
յաւ իտեան, ափսոս այն երդին, որ մի ան-  
գամ է երգուում... Ի՞նչ անեմ, թէ աշ-  
խարհը կապսի ինձանից յետոյ, ինձ ինչ...

Հէյ, ունայնաշունչ աշխարհ, գեղեցիկ,  
սուրբ աշխարհ, լսել եմ քեզ, լսեր ինձ.  
բոլորը երգուում են իրենց երգը և աշխարհը  
դառնում է երգ, նոցա մէջ ես էլ երգուում  
եմ իմ երգը... Ես կ'մեռնեմ և ոչ ոք, ոչ  
ոք չի երգի ինձ նման... Փառք քեզ աշ-  
խարհ, փառք քեզ իմ գղեակ... Տիացած  
քայլում էր իմաստունը:

— Ո՞վ գետէ, թէ այս որոնումը չէ  
գժբանութեան մայրը... գղեակ ու ծե-  
րութիւն, որոնում ու հաւատ, մերժում  
ու նորանոր բարձունքները կարօտ... Ո՛չ,  
գժբանտ է այն հոգին, որ աշխարհ չէ...

Չէ աշխարհն էլ կմեռնի... Ես էլ, Ես էլ...  
Հէյ, որոնում, տուր, տուր ինձ ջա-  
նէլութիւնը ուղում եմ մնալ աշխար-  
հում, երգել, սիրել, օրհներգել, օրհներ-  
գել իմաստութեամբ, վայելելով...

Ոնտառներից վազող քամիները շո-  
յում էին նրա քստաջան ճակատը, ծունը  
յում էին նրա ճանապարհին, օրհնու-  
ելին իջնում նրա ճանապարհին տակ...  
Թիւն էին փուում նրա ոտնելի տակ:

— Վազը այս նոյն քամին կշոյէ գե-  
րեզմանս: Կ'կանգնի գերեզմանիս քոլ  
անցորդը, ինձ պէս որոնող մի հողի, իմ  
գյութեան արգարացումը կուզի, իմ  
մահւան իմաստը կուզի իմանալ... Ես  
կմոռացւեմ...»

— Չէ ես երգում եմ, չի լինի իմ երգը  
աշխարհում և ոչ ոք, ոչ ոք ինձ պէս չի եր-  
աշխարհում չուզի, չուզի, իւրաքանչիւրի  
ւի... Կապըեմ հողի, քարի, իւրաքանչիւրի  
հոդում, բայց էլ չեմ երգի և կմեռնեմ,

բայց ոչ ոք ինձ պէս չի երգի...  
— Ի՞նչ անենք թէ մահ կայ, եկայ,  
անոայ աշխարհը, նայեցի իմ գեղեցիկ  
ուղամասութից կեանքին ու մահւան. կը-

գնամ, կմեռնեմ, էլ չեմ կը կնւի. իմ երգը  
ասացի աշխարհին և աշխարհը իմը դար-  
ձրի, ահա և իմ յաղթանակը...»

— Գեղեցիկ է մահը, անմահութեւն  
չեմ ուզում. չէի որոնի, եթէ անմահ լի-  
նէի... իմ երգը ոչ ոք ինձ պէս չի երգի,  
չի երգի...»

Համարեց անցած գեշերներն ու ցե-  
րեկները, օք ի օք սիրաք լցուում էր ծով  
խնդութեամբ, երբ չափում ու զգում էր,  
ոք շուտով զղեակը պիտի ժպանց իրեն:  
Քայլում էր ծերացած, հերաղարդ իմաս-  
տունը դո՞հ ու պայծառ:

IX.

Բարձրացրեց մի օք գլուխը, զղեակն  
էր... Վար զրեց փոքրիկ ըեւը զղեակի  
պարսպի տակ. նայեց զղեակին, ժպանց  
և օքհնեց...

— Զահէլ ու որոնսղ թողի քեզ, աւելի  
ջահէլ, իմաստուն, զեղեցիկ ու դամած  
վերադարձ քո գերկը մայրական:

Ա. Ինչ ինչ նոյնն էր, զղեակն աւելի  
էր պայծառացել ու զեղեցիացել:

Հանեց բանալիները, բաց արեց եր-  
կաթէ գաղպանեցը, ներս մտաւ. նոյնն  
էր ամեն ինչ ու աւելի գեղեցիկ...  
Գաղանները ծերացել էին, նոքա-  
դուրը որս էին արել ու ապրել գղեա-  
մուրը: Ծաղիկները բոյն այժմ տեսանելի  
կում: Ծաղիկները բոյն այժմ տեսանելի  
էր ու անուշ... Մոտեցաւ շագաւանին,  
էր մատեցրեց գլուխը, նայեց մազերին, բո-  
լորը ճերմակ էին. բայց ինչ որ քաղցրու-  
թեւն ծորաց նրա սիրաք. «Ճեր եմ, — մըմն-  
ջայ նա, — էջ, պայծառ ջահէլութեւնն  
չկայ... ի՞նչպէս թէ. ես ախուր չեմ, ես  
ճեր չեմ. ծերութեւնը նոյն ջահէլութեւնն  
է ճեափոխած ինձ համար. իմաստու-  
թեան ու զգացմունքի համար ծերութեւն  
չկայ... Ծերանում ես, ոք ապրես, ծե-  
րութեան գեղեցիկը նոյնպէս... Ծերու-  
թեւնն էլ իր կեանքն ունի... Գարունը  
գեղեցիկ է, ամառը նոյնպէս, աշունը իր  
գունատ վսեմութեւնն ունի, զեղնու-  
թեան տակ ապրում են հազար ու հազար  
լոներ. ինչ չունեն միւսները: Եւ միթէ  
ամենը, սպիտակափառ ձմեռը, քաղցրու-  
թեան ու զեղեցիութեւն չունի, յատուկ

միայն իրեն Ամեն ինչ եղակի է և ինք-  
նանպատակ յաւիտեան գարունը կը-  
ձանձբացնէր և մենք ձմեռւայ կկարօ-  
տէինք»:

Նայեց, Երկար նայեց ջրին, «Ճերա-  
ցել եմ, ժպաց. «Որքա՞ն զեզեցիկ եմ  
այժմ, որքա՞ն իմաստուն»:

Համբուրեց իր սաւելը, հոտոտեց  
ըոլոր ժաղիկները, շոյեց, համբուրեց վազ-  
րերի ու առիւծների բաշերը, սարձրացաւ  
ծանը քայլերով զէպի վեր, զէպի իմաս-  
տութեան գերը, զէպի հօր որոնած ճըշ-  
մարտութիւնը:

Ամեն ինչ սէնեակներում նոյնն էր...  
Գնաց գէպի իմաստութեան գերը, սաց  
արեց ու կարդաց... «Ո՞քան հին է, փո-  
շու ու կիսատ», մըմնջաց նա...»

Կարեց մատը ու սիրամարդի մետու-  
րեց գրեմ թաթախեց և գրեց ու լըացրեց  
իմաստութեան գերը իր արիւնով: Արե-  
ւելքի իմաստութիւնը, արեելքի մեծու-  
թիւնը գրեց, զեզեցկութիւնն ու ջահէ-  
լութիւնը գրեց...»

X.

Լուր ստարածւեց իսկոյն, որ արե-  
ելքի երթաստարդը եկել է ու ծելունի է  
այժմ և իմաստուն ու ջահէլարեելքի պէս:  
Հաւաքւեցին բոլորը նըա գարպասի  
առաջ ու կանչում էին. «Իմաստութիւն  
առւը մեզ, թէկուզ մի կաթիւ»:

Ներսից ոչ մի ձայն:

Բաց արին երկաթէ դարպասը, ըաբձ-  
րացան վեր, մտան իմաստունի սենեակը  
երկիւզածութեամբ ու հաւատով... Ի-  
մաստունը մեռել էր...

Նզա սեպհական արեւնով գըածը  
մադաղաթի վերայ, կախւած էր գլմի  
վերեբ:

«Նորից ու նորեց, գըում էր իմաս-  
տունը... ոչ ոք չգիտէ... ես արեկ տակ  
էլ լոյսով հարբած մի գողզընի երազ տե-  
սայ և թւաց, թէ զեռ զեշեր է շուրջու-  
նս վերագարձոյ սպիտակ մազերով և աշ-  
նաւի ու ինձ համար ջահէլութիւն բերի:  
խարի ու ինձ համար ջահէլութիւն բերի:  
Օրհնում եմ ինչ դալու է, օրհնում եմ իմ  
ճանապարհը արկացօղ, ուր ամեն քայլես

հետ ճերմակս աւելացաւ . . .

Հոգիս զավթնեց և գեղեցկացաւ ու  
պայծառացաւ : Հոգու գեղեցիկն է գեղե-  
ցիկ . մնացէք աշխարհում, անցէք ու ան-  
ցէք և հոգու գեղեցկութեան ծարաւէք :

Վերադարձայ . վերադարձայ դէպի  
իմ հոգին ու դէպի իմ գերեզմանը և երբ  
դդացի, ու պէտք է մեռնեմ, համբուրեցի  
մահուս աչքերը և զմայլանքով մեռայ :  
Իմ կեանքի ու իմ ասլրածի ամեն մի ըս-  
պէն մի նոր երջանկութեւն փռեց ինձ  
վերայ : Ես սիրում էի աշխարհը, սիրեցի  
և գերեզմանս : Մնացէք աշխարհում և  
պայծառացէք և աշխարհացէք . . . Վեր,  
վեր, նորից ու նորից » . . .

Ծնբագիր համբուրեցին իմաստունի  
ճակատը կնճիռներով գեղեցկացած . օրհ-  
նեցին զղեակը, սրբազն հանելուկներով  
լի . . . նա քնած էր կարծես . . .



46918

29768

6163

Института  
Природы  
Академии Наук  
СССР

2

Գրնել է 20 ԿՈՊ.

Պահեստը՝ Վաղարշապատ «Արա-  
գած» զբախանութում: